

Սալամասցոյ (s!), զի է ընդունող շնորհիւն
գեր ի վերոյ տուողէն անընդմիջարար եւ
բաշխող կարօտելոց անձանց միջնորդութիւնը:
Զոր տը անձ պահեսցէ երկար ամաւք, մա-
քուր առաքինութիւն յամ փորձութենէ հարա-
զատ եղբորօքն իւրովք ամէն:

Եւ ի բռնակալութե թորգոմեան ազ-
գիւս եւ գերող ամ քրիստոնէից. եւ ոչ կա-
րեմ պտմել զբազմ չարիքն նր եւ կամ գրով
արկանել. զի քան զայն ինչ աւելի չարիք,
որ զինքն զանորդի անուանէ, խուզաւանդ
եւ մահթիւղուման:

Արդ աղաչեմ զձեզ հառաչմամբ սրբ-
տիւք, ով մանգունք սք եկեղեցոյ, որք
հանգիսիք տւմի մեկուեան, ուսանելով եւ
կմ ուսուցանելով կմ ընդօրինակելով, յիշե-
ցէք զվերոյգրեալ զԿրիստոս զրոց աշա-
կերտս յետինս ի յաշակերանց, զհեզգս ի բա-
րին եւ զարիացեալս ի չարն, արժանի առ-
նէք յիշելոյ միով անձ ողորմին եւ անձ զյի-
շողք յիշէ ի բնին ամէն:

Ընդ նմին զհոգեւոր եղբարքն մեր զտը
Ածատուրն եւ զտը Վրդանէսն որ կմկից ե-
ղեն մեզ եւ ցաւակից, յրժմ գրեցաք, զի
գրեալ եղիցին սոքա ի գիրն կենաց ամէն:
Եւ այժմ աղաչեմք զձեզ, ով ընթերցողք
սք զրոյս, զի անմեղագիր լիջիք խոշո-
րուէ գրիս, զի գիրքս կազմած էր, զոր
գրեցաք ի թուխթն անյարմար, ամ տկա-
րուէս մերոյ անմեղադիր լերուք. բաւ
է. ամենակրօղին ան փառք յւանս ամեն.
հիմ մեր:

9.

Ձեռ. Էջմ. N 4064.

Արդ ես անպիտան Սիմէոն ցանկալի
ի բազում ժամանակաց զրոցս մոլութե եւ
կամէի մատամբ իմով գրել ուղղեցից
ըն քերթողութե արհեստին, քանզի թարգ-
մանիչք սորա ոչ գիտելով զարուեստ քե-
րականութեն ոչ կարացին ուղղակի թարգ-
մանել ուղ յայտ է հրմտացելոց որք ըն-
թեռնուք զսա: Եւ ետու գրել ումեմն Յո-
վանիսի դպրի եւ ի մնալն կիսակատար ետու
աւարտել թաթէոսի իմոյ աշակերտի սակս
ոչ ձեռնհաս լինելոյ ինձ. ի զբաղանացս եւ
ի տկարութենէս: Եթէ կարացից սրբագրե-
ցից եւ թէ ոչ անմեղադիր լերուք:

Փառք համագոյ միափառ եղապատիւ
եռանձնեա տրութեն հօր եւ որդւոյ եւ հո-
գւոյն սրբոյ: Յառաջ քան զամ յաւիտեանս
եւ այժմ եւ անգրաւ յաւիտենիւ, ամէն:
Որոյ շնորհիւ եւ օգնականութիւն յանկ եղեալ
կատարեցաւ գիրքս որ կոչի մոլութեց. նաեւ
մեկնութիւն առաւանդ վեցօրեկցն արարչու-
թե ան: Այլ եւ զգիրս հոգւոց եւ հրեշտա-
կաց, ժողովեալ ի մի տուփ: Ի թուականիս
հայոց. Խ. Կ. եւ Է. ամի, յապրիլ ամսոյ
քսան եւ ութ. եւ ի մեհեկի քսան եւ մէկ:
Յերկիրս յԱյրարատայ: Ընդ հովանեաւ երկ-
նահանգէտ գերահրջակ սրբոյ աթոռոյս Էջ-
միածնիս: Ի հայրապետութե ընդհանուր
սեռիս հայկազեան տեառն Փիլիպպոսի սրբ-
բազան կաթողիկոսի: Ի թաղաւորութեն
պարսից փոքր շահ արասին: Եւ ի տեղա-
կալութե նահանգիս քոց Խոսրով խանին:
Աշխատասիրութե նուաստ եւ անարժան Սի-
մէոնի, զի թէպէտ եմ յաւակեցաց երիցս
եռանեալ ձգնազգեաց սրբոյ հայրապետիս
սակայն գերանով մեղանացս կուրացեալ
վերջացեալ զբոսայ ի լուսաշաւի ընթացից
սորա նաեւ տրուպ յամենեյուեց այսինքն
յաւակեցակցաց իմոյ վարդապետաց: Արդ
գրեցաւ մեկնութի վեցօրեկց արժեւն
յաշխարհին պարսից մերձ յԱսպահան ար-
քայանիստ քաղաքին ի գեղաբաղաբին Նոր
Ջուղայոյ ի մենաստանի Ամենափրկչի վա-
նացն: Եւ գիրք հոգեացն եւ հրեշտակացն
ի սք աթոռոյս Էջմիածնիս. ձեռամբ Թա-
րեոսի դպրի իմոյ աւակեցի այսմ զրչութե
արհեստի: Իսկ մոլութիւն գրեցաւ ի յերկրիս
Գեղամայ ի գաւառիս Մաղազայ ընդ հո-
վանեաւ վանացս որ կոչի հայր Յոհանք:
Ձեռամբ Յովանիսի դպրի: Եւ ես անարժան
Սիմէոնս տեսուչ գոլով նահանգիս ետու գրել
զգիրսս զայս ի վայելումն անձին իմոյ եւ
յիշատակ յետ ելից իմոց վայելողաց: Արդ
որք պատահիցիք այսմ մատենի ընթերց-
մամբ կամ օրինակելով յիշեցէք ըզնուաստ
Սիմէոնս որ անուամբ եւեթ կոչիմ վրդպտ,
եւ տեսուչ իսկ գրծով յոյժ տարակացեալ
կամ յայսմ շնորհէ: Դարձեալ աղերսանօք
խնդրեմ պատահողաց յիշել ի սք յաղօթս
ձեր զմեծագոյն վարդապետն Յակոբ եւ
Սիմէոն եւ զուսումնակիցս իմ զԱռաքել
վրդպտն (1), եւ զՄովսէս վարդապետն.

(1) Առաքել Դաւրիթեցի եւ Առաքելի մասին
տես եւ N 3159: